ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«07» 04 2014թ.

N 51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $77^1$-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից մարտ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 5 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

## ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2014 թվականի N 03

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N45-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի նախահաշվի ծախսերի կատարման ժամանակացույցում կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախադպրոցական կրթություն՝ 09.1.1 բաժնի նախահաշվի 4239 հոդվածի 4-րդ եռամսյակի պլանային թվից 570,0 հազար դրամն ուղղել 1-ին եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թվականի մարտի 14

գ. Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

## ՈՐՈՇՈՒՄ

«24» մարտի 2014 թվականի N 04

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Այգեկ համայնքի բնակիչ Անահիտ Թորգոմի Հովհաննիսյանի (ծնված 10.04.1973թ.) դիմումը՝ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 7-րդ փողոց 16 հասցեում գտնվող իրեն պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 13-ի թիվ 4 որոշման և ըստ իրեն պատկանող ժառանգության իրավունքի վկայագրի՝ տրված 2014 թվականի մարտի 11-ին ս/մ 1127) 0,11հեկտար օրինական հողամասին կից 50,0 քառակուսի մետր ավել օգտագործվող հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 7-րդ փողոց 16 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Անահիտ Թորգոմի Հովհաննիսյանի (ծնված 10.04.1973թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,11հեկտար հողամասին կից 50,0 քառակուսի մետր ավել օգտագործվող հողամասի, դրանց վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ (բնակելի տուն՝ 72, 2 քառակուսի մետր, կառուցված 1981թ. բնակելի տուն՝ 9,1 քառակուսի մետր 1985թ. բնակելի տուն՝ 55,1 քառակուսի մետր կառուցված 1981թ., բաց պատշգամբ՝ 11,4 քառակուսի մետր կառուցված 1981թ., բաց պատշգամբ՝ 10,7 քառակուսի մետր, կառուցված 1985թ., նկուղ՝ 25,8 քառակուսի մետր, կառուցված 1981թ., անասնաշենք՝ 13,4 քառակուսի մետր, կառուցված 1981թ., թռչնանոց՝ 10,7 քառակուսի մետր, կառուցված 1985թ., ավտոտնակ՝ 23,2 քառակուսի մետր, կառուցված 1985թ., պարիսպ՝ 3,4 քառակուսի մետր, կառուցված 1985թ.):
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Անահիտ Թորգոմի Հովհաննիսյանի (ծնված 10.04.1973թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, այդ հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Բնակելի տանը տրամադրել 7-րդ փողոց 16 հասցեն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թվականի մարտի 24

գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 21
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2014 թվականի N 05

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ կետի «ա» ենթակետով, 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 17-ի թիվ-10 նիստի որոշումը և Ոսկեհատ Պետրոսյանի 2014 թվականի մարտի 28-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքում գտնվող Ոսկեհատ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1178 հա տնամերձ հողամասից (ծածկագիր 0015-0012) առանձնացված 0,045 հա տնամերձ հողամասին տալ 6/1 փողոց 18/2 հասցեն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թվականի մարտի 28
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» մարտի 2014 թվականի N 03-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, սոցիալական օգնության խնդրանքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմ ներկայացված դիմումատուների ընտանիքների սոցիալական վիճակները և դիմումներում նշված փաստերի իսկությունն ուսումնասիրելու նպատակով՝ *կարգադրում եմ.*

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Մ. Աբրահամյան)՝ ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եզրակացություն և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թվականի մարտի 3
գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ գյուղական
համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի «03»-ի N 03-Ա կարգադրության

# ԿԱԶՄ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ - | Աբրահամյան Մայիս - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ |
| Հանձնաժողովի անդամներ - | Խաչատրյան Վարուժան - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի բնակիչ |
| | Սարգսյան Սարգիս Ռ. - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի բնակիչ |

Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Գայանե Սարգսյան